ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
2025-2026 ուստարի
9-րդ դասարան
(Տևողությունը՝ 3 ժամ)

❖ **Միրելի՛ բարեկամ, կարդա՛ հատվածը «Սասնա ծռեր» էպոսի համահավաք բնագրի 3-րդ ճյուղից և կատարի՛ր առաջադրանքները: Մաղթում ենք հետաքրքիր ու արդյունավետ աշխատանք:**

ԴԱՎԹԻ ԵՎ ՄԵԼԻՔԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

(կրճատումներով)

….Մնաց մե՛կ զարկ, մեկ աստված, մեկ ես.
Յա կը սպանեմ, յա կը թողում:
Դավիթ դարձավ,
Գնաց, հասավ Սասնա սարեր,
Քշեց, էկավ Մելքի վերա:
….Կանչեց, ասաց.
- Յա՜ Մարութա բարձրիկ Աստվածածին,
Յա Խաչ Պատերազմին, ինչ վեր իմ աջ թևին:
Կանչեց, զարկեց Թուր Կեծակին:

Կտրեց քառսուն ջաղացի քար,
Կտրեց քառսուն գոմշու կաշին,
Կտրեց հրեշ Մըսրա Մելքին,
Կտրեց ճակտից, ոտքերուց դուրս էլավ
Ու յոթ գազ էլ մտավ գետին….
Մըսրա Մելիք կանչեց, ասաց.
- Դավի՛թ, ես էստե՛ղ եմ,
Մեկ է՛լ զարկի:
Դավիթ ասաց. «Մըսրա՛ Մելիք, քեզի թա՛փ տուր»:
Մըսրա Մելիք զինք թափ էտուր,
Մեկ կտոր ընկավ էստեղ, մեկէ՝ էնտեղ:
Մըսրա Մելիք խատավ:

….Դավիթ զձին քշեց, էկավ կանգնեց,
Ձեռ էթալ, վերմակ բացեց,
Տեսավ քառսուն ջաղցի քարեր,
Ամենն էլ թրի առջև կտրտված.
Իր ձեռ էթալ, քարեր վերուց, գցեց,
Տեսավ քառսուն գոմշու կաշիք՝
Ամեն կտոր-կտոր արած:
Մելիքի մեր կռացավ էդ հորի վերան,
Կանչեց՝ Մելի՛ք, Մելի՛ք, Մելի՛ք:
Մելիք ձեն չէտու:
Մելիքի մեր ու քիր նստան էնտեղ, վերան լացին:
Ապա մեր դարձավ Դավթին, ասաց.
- Դավի՛թ, սպանեցիր Մըսրա Մելքին,
Վնա՛ս չը կա, դու է՛լ իմ տղան ես:
Արի, էնոր կնիկ դու ա՛ռ,
Մըսրա թագավորություն մնա՛ քեզի,
Սասուն զաթի քո՛նն է:
Դավիթ ասաց.
- Ես մորե որ ծնվեր եմ՝ անարա՛տ եմ,
Ես իմ հալալ լեշ հարամ լեշերու չե՛մ խառնի:
Կուզես արի, քե կը տանեմ մոտ ինձ՝ Սասուն:
Ասաց. Չէ՛, Դավի՛թ, չեմ գա Սասնա էրկիր:
Ասաց. Որ չես գա մեր Սասնա էրկիր,
Գնա, Մըսըր տվեր եմ քե, ապրի:

Դավիթ ձիու գլուխ շրջեց,
Էլավ, գընաց մեջ զորքերին.
Ինչ զորք զորական մնացե՝
Կանչեց, հրամայեց, ասաց.
- Ամենիդ իրավունք կը տամ՝
Ուր տեղեն էկեր եք, էլե՛ք, գնացե՛ք ձեր տեղ:
Էլե՛ք, գնացե՛ք ու ձեր տնե՛ր նստեք,
Դուք ինձ համար աղո՛թք արեք,
Իմ հորն ու մորն էլ օղորմի՛ տվեք,
Հանդա՛ռտ կացեք,
Մեկ էլ չէլնեք ու գաք վեր Սասնա:
Մեկ էլ որ զենք առնեք մեր դեմ,
Թե որ դուք կռվի գաք վեր մեզ,
Քառսուն գազ խոր հորում ըլնեք,
Թե ջաղացի ջոջ քարի տակ,
Տ'էլնի ձեր դեմ Սասնա Դավիթ,
Տ'էլնի ձեր դեմ Թուր Կեծակին…

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է Դավիթն ասում, թե մնաց մեկ զարկ: Ի՞նչ էր պատահել նախորդ երկու զարկերի պարագայում: Արդարացրո՛ւ Դավթին. արդյոք ճի՞շտ էր վարվել՝ զիջելով երկու զարկերի իրավունքը: **5 մ.**

2. Ինչո՞ւ է Մելիքի մայրն ասում, թե Դավիթն էլ է իր տղան: Արդյոք այդպե՞ս է: Հիմնավորի՛ր կարծիքդ՝ ըստ դյուցազներգության բովանդակության: **5 մ.**

3. Քո կարծիքով Դավիթը երրորդ զարկի համար ինչո՞ւ հասավ Սասնա սարեր և այնտեղից քշեց իջավ՝ Մսրա Մելիքին սպանելու: **10 մ.**

4. Բնութագրի՛ր Սասունցի Դավթին՝ ըստ այս հատվածի. բնավորության ո՞ր գծերն են տեսանելի. կարծիքդ ապացուցի՛ր հատվածից, ինչպես նաև ողջ դյուցազներգությունից բերված օրինակներով: Օրինակները կարող ես կա՛մ նույնությամբ մեջբերել, կա՛մ էլ վերապատմել բովանդակությունը: **10 մ.**

5. Քո կարծիքով արդիակա՞ն է արդյոք Դավթի սպառնալիք-կարգադրությունը Մսրա Մելիքի զորքին: Մեկնաբանի՛ր՝ նկատի ունենալով մեր ժամանակներում կատարված դեպքերը: **10 մ.**

Առավելագույն միավորը՝ 40:

Միավոր չի տրվում հետևյալ դեպքերում.

- Պատասխանն ամբողջությամբ վերաշարադրանք է:
- Գաղափարը չի բխում տրված նյութից:

❖ **Գրի՛ր ստեղծագործական-վերլուծական շարադրանք Վահան Տերյանի բանաստեղծության շուրջ:**

Ինչպե՞ս չսիրեմ, երկի՛ր իմ կիզված,
Պարզված վերստին սրերին սուրսայր.
Ինչպե՞ս չսիրեմ, հեզությամբ լցված
Դու յոթնապատի՛կ խոցված Տիրամայր:

Որքան որ ելան արյունիդ ագահ,
Դու՝ կամավոր զոհ, բոլորը տվիր.
Դու հավետ եղար անարատ վկա,
Չարերի կոխան, խաչվա՛ծ իմ երկիր:

Հրկեզ քո հոգին՝ որպես առատ խունկ,
Աշխարհի համար պարզեցիր անպարտ,
Հեզ ընդունեցիր երդում ու երկունք,
Դու արքայաբար վեհ ու անհպարտ:

Ժամ է, ե՛լ նորից, իմ ծիրանավա՛ռ,
Զրահավորվի՛ր խանդով խնդագին,
Վառի՛ր երկունքի գիշերում խավար
Հրով մկրտված նահիրյան հոգին...

[1915]

Առավելագույն միավորը՝ 10:

Շարադրանքդ կարժանանա առավելագույն միավորի, եթե՝

1. Ըմբռնել ես բանաստեղծության հիմնական թեման, գաղափարը, կարողացել ես վերաձևակերպել և քո բառերով ներկայացնել բանաստեղծի ասելիքը:
2. Կիրառել ես հարուստ բառապաշար և պատկերավորման միջոցներ, կարողացել ես բանաստեղծի գործածած արտահայտչամիջոցները քո շարադրանքում կիրառել նորովի:
3. Վերլուծել ես բանաստեղծությունը, անդրադարձել ես բանաստեղծության խորհրդանիշին:
4. Արժևորել և գնահատել ես բանաստեղծությունը, հիմնավորել ես քո վերաբերմունքը: Դրսևորել ես երևակայություն և ստեղծագործական մոտեցում:
5. Շարադրանքդ լեզվական առումով անթերի է. տեղին և գրագետ ես կիրառում հայերենի ոճական և քերականական առանձնահատկությունները:

Ուշադրություն

Բոլոր առաջադրանքների շարադրանքներից միավոր է հանվում, երբ առկա են.

- ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- բառագործածության ու շարադասական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- մտքի ձևակերպման սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- հարակից սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար):

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Հովհաննիսյան